

Հ Ո Ղ

Հո'ղ՝
արգանդ, գերեզման
ու նորից արգանդ:
Ուր ապրել եմ ես
երկար տարիներ՝
առաջ քան ծնունդս:
Ուր, երբ որ մեռնիմ,
նորէն պիտ' ապրիմ
երկար տարիներ՝
առաջ քան ծնունդս ...

Հո'ղ՝
արգանդ, գերեզման
ու նորից արգանդ:
Քեզմով է շինուած
տանաքս աննրման,
ու երբ նա փուլ գայ,
քեզմով պիտ' ծեփեն
պատերը նըրա,
որ կրկին անգամ
դէպ' վեր բարձրանայ:
Հո'ղ՝
արգանդ, գերեզման
ու նորից արգանդ,
Հո'ղ ...:

Ո Ի Ժ

Թող երգեն նըրանք
Ովքեր ուզում են
երգերը հիւանդ
Վարդի ու սէրի.
Կ'երգեմ ես միայն
եմ երգը ուժի

Էլ ո'վ է ուզում
Մի Ատլաս լինել,
Ու մէջքի վըրայ
Աշխարհը կըրել,
Տիեզերք լինել,
Աշխարհն իր ափում
Որպէս խաղալիք,
Մի քերել շունչով
Աստղերը ցրուել,
Արեւը մարել,
Լուսինը վառել,
Տիեզերք լինել:

Երգըս որպէս աղամանդէ
Մի մոլորակ,

Տիեզերքում կ'երթա՛յ, կ'եր-
թա՛յ,
Եւ ամէն տեղ իր հետքը կայ,
Ինքը չըկայ:

Մ Ի Հ Ի Ն Ե Ր Գ

Արծա՛ք լուսին, դու նախքան ես
Ամպերով լի երկընձում.
Ես էլ քեզ պէս անցնող փամբորդ,
Թափառում եմ այս երկրում:
Նայում եմ քեզ երկարօրէն,
Աստղերն էլ չեն երեւում,
Արդեօք դու էլ նայո՞ւմ ինձ,
Ու զիս տեսնո՞ւմ ես քեզ պէս:

Փայլո՛ւմ լուսին, դու նախքան ես
Աստղազարդ երկնում,
Գիտե՞ս արդեօք աղամանդէ
Այդ փայլդ ումից ես գտնում:
Նայում եմ քեզ երկարօրէն,
Տեսնում եմ քեզ, քո մէջ՝ ինձ:
Յետոյ խաղաղ լընակին մէջ
Տեսնում եմ քեզ, տեսնում՝ ինձ...
Բայց չը գիտեմ ո՞ւր փնտռեմ քեզ,
Լընի՞ն մէջ քէ վերելում ...

Լ Ս Ե Ց Է Բ

...Ու լըսեցէ՛ք ձայնն ահարկու՝ լըռութեան.
Անձայն շըրջիւնն երազներու մըրըկաքել,
Ու որոտը փոքորկալի մոտքերու:
Լըսեցէ՛ք զանգն աներեւոյժ քարանի՛
Ուղիներով անվախեան,
Հըրաշագեղ հանգրըւանին ընթացող ...
Ու նախքան մոլորակէ՛ մոլորակ,
Երկիրէն վեր, քեւերն հագած լըռութեան,
Ու դուք երկրէն կը մեծնաք ...
Լըսեցէ՛ք մեզմ զանգերն յետոյ
Լըռութեան մեծ տանարի,
Մըտէ՛ք, տեսէ՛ք նըրաքը վառ իմաստութեան,
Լուսաւորի՛չ խաւարի:
Կը հասկընաք յետո՛յ միայն
Որքա՛ն փոքր են երկիր, երկինք, արեգակ
Որ պիտ' մեռնին ... Դադրի՛ պիտի ե՛ւ սըրտի
Բարախումն այս – տըլտուր մահերգ ...
Ու այն ատեն, ու այն ատեն
Մեծ լըռութիւնն իշխէ պիտի աշխարհին ...
...Արդ լըսեցէ՛ք ձայնն ահարկու՝ լըռու-
թեան:

Յ. ԿՈՍՏԱՆԴՆԱՆ

Փարիզ